



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2016 թվականի առաջին կիսամյակում (վերլուծություն)

2016 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 82783 գործարք, որոնց քանակը, 2015 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 15.0 %-ով, իսկ 2015 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ 0.9 %-ով :

2016 թվականի առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2016 թվականի առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2016 թվականի առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 21773 օտարման գործարքի 71.8 %-ը կազմել է առուվաճառքը, 27.3 %-ը՝ նվիրատվությունը և 0.9 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքի քանակի 36.8 %-ն

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 36.1 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2016 թվականի առաջին կիսամյակում անշարժ գույքի օտարման գործարքների քանակը, 2015 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել է 20.6 %-ով, իսկ 2015 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ 3.7 %-ով: 2016 թվականի առաջին կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 3576 առուվաճառքի գործարքի 63.1 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2016 թվականի առաջին կիսամյակում, 2015 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 29.1 %-ով, իսկ 2015 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 2.6 %-ով:

2016 թվականի առաջին կիսամյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով

| Վարչական շրջաններ | Միջին գները /դրամ/ | | |
|------------------------|-------------------------|-------------------------|--------------------------|
| | առաջին կիսամյակ 2015 թ. | առաջին կիսամյակ 2016 թ. | երկրորդ կիսամյակ 2015 թ. |
| Կենտրոն | 428000 | 428000 | 428000 |
| Արաբկիր | 356600 | 357000 | 356700 |
| Քանաքեռ-Զեյթուն | 282700 | 283000 | 282800 |
| Նոր Նորք | 253100 | 254000 | 253400 |
| Ավան | 260500 | 261500 | 260900 |
| Էրեբունի | 251800 | 252300 | 252200 |
| Շենգավիթ | 257000 | 257600 | 257300 |
| Դավթաշեն | 275600 | 276600 | 276200 |
| Աջափնյակ | 249900 | 250900 | 250300 |
| Մալաթիա-Սեբաստիա | 243000 | 243950 | 243500 |
| Նուբարաշեն | 156600 | 157200 | 156900 |
| Միջինը Երևանում | 274100 | 274700 | 274400 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2016 թվականի առաջին կիսամյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գները, 2015 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, աճել են 0.1 %-ով, իսկ 2015 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ 0.2%-ով:

2016 թվականի առաջին կիսամյակում մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1735 բնակարան, որոնց քանակը 2015 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել է 16.8 %-ով, իսկ 2015 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ 7.0 %-ով:

2016 թվականի առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները /դրամ/ | | |
|-------------|-------------|----------------------------|----------------------------|-----------------------------|
| | | առաջին կիսամյակ 2015 թ. | առաջին կիսամյակ 2016 թ. | երկրորդ կիսամյակ 2015 թ. |
| Արագածոտն | Աշտարակ | 116000 | 116000 | 116000 |
| | Ապարան | 57600 | 58300 | 58000 |
| | Թալին | 65900 | 66700 | 66300 |
| Արարատ | Արտաշատ | 97700 | 98700 | 98000 |
| | Մասիս | 115800 | 115800 | 115800 |
| | Վեդի | 101100 | 101700 | 101500 |
| Արարատ | Արարատ | 76100 | 77400 | 76950 |
| | Վաղարշապատ | 154100 | 154200 | 154100 |
| | Արմավիր | 121200 | 121200 | 121200 |
| Գեղարքունիք | Մեծամոր | 87500 | 87600 | 87550 |
| | Սևան | 99200 | 99400 | 99400 |
| | Գավառ | 60000 | 60500 | 60200 |
| | Մարտունի | 107700 | 107700 | 107700 |
| Լոռի | Վարդենիս | 44800 | 45200 | 44950 |
| | Ճամբարակ | 28700 | 28750 | 28700 |
| | Վանաձոր | 88500 | 88600 | 88500 |
| | Ստեփանավան | 74600 | 74700 | 74600 |
| | Սպիտակ | 99800 | 99850 | 99800 |
| | Ալավերդի | 55200 | 55700 | 55350 |
| | Տաշիր | 47300 | 47400 | 47350 |
| Կոտայք | Թումանյան | 11000 | 11000 | 11000 |
| | Շամլուղ | 8000 | 8000 | 8000 |
| | Ախթալա | 20300 | 20500 | 20500 |
| | Արուսյան | 155100 | 155100 | 155100 |
| | Նոր Հաճն | 128500 | 128550 | 128550 |
| | Բյուրեղավան | 108200 | 108200 | 108200 |
| | Եղվարդ | 109400 | 109750 | 109450 |
| Շիրակ | Հրազդան | 63800 | 63900 | 63800 |
| | Ծաղկաձոր | 292400 | 292400 | 292400 |
| | Զարենցավան | 85500 | 85500 | 85500 |
| Սյունիք | Գյումրի | 109200 | 109400 | 109250 |
| | Արթիկ | 66750 | 67200 | 66850 |
| | Մարալիկ | 40700 | 41000 | 40850 |
| Վայոց ձոր | Գորիս | 122900 | 123600 | 123100 |
| | Կապան | 93700 | 94900 | 94200 |
| | Սիսիան | 91800 | 92100 | 92000 |
| | Մեղրի | 81550 | 82900 | 82400 |
| | Ագարակ | 47200 | 47700 | 47350 |
| | Քաջարան | 94600 | 94800 | 94600 |
| | Դաստակերտ | 8000 | 8000 | 8000 |
| Սավուռ | Վայք | 94950 | 95100 | 95000 |
| | Եղեգնաձոր | 125550 | 126100 | 125700 |
| | Զերմուկ | 112900 | 113160 | 112950 |
| Տավուշ | Դիլիջան | 113900 | 115400 | 114800 |
| | Իջևան | 118300 | 118500 | 118400 |
| | Բերդ | 60200 | 60400 | 60300 |
| | Նոյեմբերյան | 49900 | 50300 | 50200 |
| Այրում | 31850 | 31850 | 31850 | |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 մ² մակերեսի շուկայական միջին գները, 2015 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, աճել են 0.2%-ով, իսկ 2015 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ 0.3%-ով:

2016 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 1937 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևանում՝ 563, մարզերում՝ 1374: 2015 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 16.3 %-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 22.9 %-ով, իսկ մարզերում՝ 13.3%-ով: 2016 թվականի առաջին կիսամյակում, 2015 թվականի առաջին կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 5.6 %-ով, ընդ որում, Երևան քաղաքում՝ 6.8 %-ով, իսկ մարզերում՝ 5.1 %-ով:

2016 թվականի առաջին կիսամյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

| Վարչական շրջաններ | Միջին գները /դրամ/ | | |
|-----------------------------------|-------------------------|-------------------------|--------------------------|
| | առաջին կիսամյակ 2015 թ. | առաջին կիսամյակ 2016 թ. | երկրորդ կիսամյակ 2015 թ. |
| Կենտրոն | 476100 | 476100 | 476100 |
| Արաբկիր | 383000 | 383000 | 383000 |
| Քանաքեռ-Զեյթուն | 295000 | 295000 | 295000 |
| Նորք-Մարաշ | 319200 | 319200 | 319200 |
| Ավան | 270500 | 270500 | 270500 |
| Էրեբունի | 239750 | 239750 | 239750 |
| Շենգավիթ | 255000 | 255000 | 255000 |
| Դավթաշեն | 276000 | 276000 | 276000 |
| Աջափնյակ | 250050 | 250100 | 250050 |
| Մալաթիա-Սեբաստիա | 238000 | 238000 | 238000 |
| Նուբարաշեն | 150800 | 150800 | 150800 |
| Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից) | 286700 | 286700 | 286700 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2016 թվականի առաջին կիսամյակում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2015 թվականի երկրորդ կիսամյակի և 2015 թվականի առաջին կիսամյակի համեմատ, մնացել են անփոփոխ:

2016 թվականի առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական

միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները /դրամ/ | | |
|-------------|-------------|----------------------------|----------------------------|-----------------------------|
| | | առաջին կիսամյակ 2015 թ. | առաջին կիսամյակ 2016 թ. | երկրորդ կիսամյակ 2015 թ. |
| Արագածոտն | Աշտարակ | 136200 | 136200 | 136200 |
| | Ապարան | 60050 | 60050 | 60050 |
| | Թալին | 69250 | 69250 | 69250 |
| Արարատ | Արտաշատ | 100000 | 100000 | 100000 |
| | Մասիս | 115100 | 115100 | 115100 |
| | Վեդի | 102300 | 102300 | 102300 |
| | Արարատ | 88000 | 88000 | 88000 |
| Արմավիր | Վաղարշապատ | 153100 | 153100 | 153100 |
| | Արմավիր | 107000 | 107000 | 107000 |
| Գեղարքունիք | Սևան | 94800 | 94950 | 94900 |
| | Գավառ | 57100 | 57100 | 57100 |
| | Մարտունի | 96100 | 96100 | 96100 |
| | Վարդենիս | 41000 | 41100 | 41050 |
| | Ճամբարակ | 31100 | 31100 | 31100 |
| Լոռի | Վանաձոր | 100200 | 100900 | 100700 |
| | Ստեփանավան | 90300 | 91200 | 91000 |
| | Սպիտակ | 114000 | 114000 | 114000 |
| | Ալավերդի | 50200 | 50200 | 50200 |
| | Տաշիր | 51900 | 51900 | 51900 |
| | Թումանյան | 12000 | 12000 | 12000 |
| | Շամլուղ | 14000 | 14000 | 14000 |
| | Ախթալա | 30000 | 30000 | 30000 |
| Կոտայք | Աբովյան | 157000 | 157300 | 157200 |
| | Նոր Հաճն | 129800 | 129800 | 129800 |
| | Բյուրեղավան | 120500 | 120500 | 120500 |
| | Եղվարդ | 116100 | 116100 | 116100 |
| | Հրազդան | 82600 | 82600 | 82600 |
| | Ծաղկաձոր | 305000 | 305000 | 305000 |
| | Չարենցավան | 83000 | 83000 | 83000 |
| Շիրակ | Գյումրի | 118700 | 119250 | 119150 |
| | Արթիկ | 63100 | 63400 | 63200 |
| | Մարալիկ | 52000 | 52000 | 52000 |
| Սյունիք | Գորիս | 130000 | 130000 | 130000 |
| | Կապան | 100200 | 100700 | 100600 |
| | Սիսիան | 96500 | 96500 | 96500 |
| | Մեղրի | 84500 | 84600 | 84550 |
| | Ագարակ | 46900 | 46900 | 46900 |
| | Դաստակերտ | 11610 | 11610 | 11610 |
| Վայոց ձոր | Վայք | 90050 | 90150 | 90100 |
| | Եղեգնաձոր | 116600 | 116750 | 116700 |
| | Ջերմուկ | 131300 | 131300 | 131300 |
| Տավուշ | Դիլիջան | 113700 | 115500 | 115200 |
| | Իջևան | 123200 | 123200 | 123200 |
| | Բերդ | 60100 | 60100 | 60100 |
| | Նոյեմբերյան | 48300 | 48300 | 48300 |
| | Այրում | 36250 | 36250 | 36250 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2015 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ մնացել անփոփոխ, իսկ 2015 թվականի առաջին կիսամյակի համեմատ, աճել են 0.1%-ով:

Ընդհանուր առմամբ, 2016 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում օտարվել է 8019 միավոր /4078.59 հա/ հող, որից Երևանում՝ 549 միավոր /60.79 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 4825 միավոր /3774.30 հա/, որից Երևանում՝ 30 միավոր /7.46 հա/,
- բնակելի կառուցապատման հող՝ 2163 միավոր /171.55 հա/, որից Երևանում՝ 264 միավոր /14.61 հա/,
- հասարակական կառուցապատման հող՝ 753 միավոր /99.53 հա/, որից Երևանում՝ 241 միավոր /37.87 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 69 միավոր /18.44 հա/, որից Երևանում՝ 13 միավոր /0.84 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 26 միավոր /10.80 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 181 միավոր /3.94 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.002 հա/,
- ջրային հող՝ 2 միավոր /0.03 հա/ ընդհանուր մակերեսով:

2016 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում օտարված հողերից 6373 միավորի /3303.89 հա/ նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 386 միավոր /42.88 հա/, նվիրատվության գործարք՝ 1556 միավոր /761.21 հա/, որից Երևանում՝ 106 միավոր /10.63 հա/ և փոխանակության գործարք՝ 90 միավոր /13.49 հա/, որից Երևանում՝ 57 միավոր /7.28 հա/:

Հանրապետությունում 2016 թվականի առաջին կիսամյակում, 2015 թվականի առաջին կիսամյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 17.1 %-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 20.8 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 5.5 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 24.4 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Կոտայքի մարզում՝ 603.75 հա, որից 553.88 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 23.8 %-ը կամ 1518 միավորը /669.49 հա/ հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 135 միավոր /6.00 հա/, իսկ 75.5%-ը կամ 4810 միավորը /2632.83 հա/ հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 245 միավոր /36.69 հա/: 2016 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում գրանցվել է հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 45 գործարք /1.57 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարք:

Ստորև ներկայացված են 2016 թվականի առաջին կիսամյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների,

հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

| | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող | | | | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող | | | | | | | |
|-------------|---|--------------|----------------------------------|--------------|------------------------------------|--------------|-------------------------------|--------------|------------------------------------|--------------|----------------------------------|--------------|-------------------------------------|--------------|-------------------------------|--------------|
| | Գյուղ. նշանակության հողեր | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Գյուղ. նշանակության հողեր | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապատ (տնամերձ) հողեր | | Հասարակական կառուցապատ. հողեր | | | | | | բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր | | Հասարակական կառուցապատ. հողեր | |
| | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) |
| Երևան | 0 | 0.00 | 6 | 0.58 | 48 | 2.63 | 81 | 2.80 | 21 | 5.43 | 6 | 0.26 | 137 | 8.53 | 81 | 22.47 |
| Արագածոտն | 100 | 69.04 | 3 | 0.29 | 13 | 0.42 | 42 | 2.12 | 319 | 247.87 | 2 | 0.01 | 102 | 9.28 | 6 | 0.66 |
| Արարատ | 79 | 158.27 | 2 | 0.41 | 76 | 4.79 | 26 | 1.56 | 422 | 350.74 | 0 | 0.00 | 197 | 17.06 | 22 | 0.72 |
| Արմավիր | 22 | 29.48 | 2 | 0.13 | 6 | 0.11 | 10 | 0.14 | 400 | 435.10 | 5 | 0.37 | 231 | 22.00 | 16 | 0.64 |
| Գեղարքունիք | 28 | 71.41 | 5 | 0.70 | 18 | 2.16 | 68 | 7.70 | 112 | 116.34 | 7 | 0.59 | 92 | 10.81 | 7 | 1.59 |
| Լոռի | 8 | 4.72 | 4 | 0.18 | 28 | 0.80 | 25 | 4.97 | 922 | 454.90 | 3 | 0.04 | 41 | 3.70 | 18 | 0.96 |
| Կոտայք | 85 | 151.06 | 4 | 5.49 | 219 | 6.11 | 50 | 2.61 | 454 | 402.81 | 4 | 1.61 | 276 | 23.47 | 35 | 8.86 |
| Շիրակ | 32 | 12.59 | 2 | 3.17 | 27 | 2.27 | 37 | 1.50 | 253 | 188.72 | 0 | 0.00 | 53 | 5.20 | 16 | 1.16 |
| Սյունիք | 29 | 35.35 | 3 | 0.35 | 29 | 0.74 | 11 | 0.58 | 268 | 162.42 | 0 | 0.00 | 32 | 3.67 | 5 | 0.58 |
| Վայոց ձոր | 23 | 25.11 | 0 | 0.00 | 7 | 0.16 | 10 | 0.23 | 114 | 75.48 | 0 | 0.00 | 14 | 1.62 | 7 | 0.15 |
| Տավուշ | 18 | 49.09 | 1 | 0.13 | 20 | 1.14 | 26 | 0.47 | 59 | 37.85 | 3 | 0.08 | 30 | 2.35 | 7 | 0.51 |
| Ընդամենը | 424 | 606.12 | 32 | 11.43 | 491 | 21.33 | 386 | 24.68 | 3344 | 2477.66 | 30 | 2.96 | 1205 | 107.69 | 220 | 38.30 |

Ստորև ներկայացված են 2016 թվականի առաջին կիսամյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը.

| | Ուղղակի վաճառք | | | | | | | | Աճուրդ վաճառք | | | | | | | | | |
|-------------|----------------|--------------|----------------------------------|--------------|--------------------------------------|--------------|--------------------------------|--------------|---------------|--------------|----------------------------|--------------|----------------------------|--------------|--------------------------------------|--------------|--------------------------------|-------|
| | Ընդամենը | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Ընդամենը | | Գյուղ. նշանակության հողերի | | Գյուղ. նշանակության հողերի | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի | | հասարակական կառուցապատ. հողերի | | | | | | | | բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի | | հասարակական կառուցապատ. հողերի | |
| | Միավոր | Մակերես /հա/ | Միավոր | Մակերես /հա/ | Միավոր | Մակերես /հա/ | Միավոր | Մակերես /հա/ | Միավոր | Մակերես /հա/ | Միավոր | Մակերես /հա/ | Միավոր | Մակերես /հա/ | Միավոր | Մակերես /հա/ | | |
| Երևան | 77 | 1.89 | 6 | 0.58 | 34 | 0.80 | 37 | 0.51 | 58 | 4.12 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 14 | 1.83 | 44 | 2.29 |
| Արագածոտն | 27 | 1.66 | 0 | 0.00 | 2 | 0.21 | 25 | 1.45 | 78 | 42.38 | 47 | 41.21 | 3 | 0.29 | 11 | 0.20 | 17 | 0.68 |
| Արարատ | 4 | 0.08 | 0 | 0.00 | 2 | 0.06 | 2 | 0.02 | 178 | 160.02 | 78 | 153.34 | 2 | 0.41 | 74 | 4.72 | 24 | 1.55 |
| Արմավիր | 6 | 0.09 | 0 | 0.00 | 3 | 0.02 | 3 | 0.07 | 33 | 29.29 | 21 | 29.01 | 2 | 0.13 | 3 | 0.08 | 7 | 0.07 |
| Գեղարքունիք | 12 | 1.02 | 1 | 0.35 | 6 | 0.35 | 5 | 0.32 | 107 | 80.94 | 28 | 71.41 | 4 | 0.35 | 12 | 1.80 | 63 | 7.38 |
| Լոռի | 14 | 0.14 | 0 | 0.00 | 7 | 0.09 | 7 | 0.05 | 51 | 10.53 | 8 | 4.72 | 4 | 0.18 | 21 | 0.71 | 18 | 4.92 |
| Կոտայք | 144 | 0.76 | 0 | 0.00 | 141 | 0.60 | 3 | 0.16 | 214 | 164.50 | 85 | 151.06 | 4 | 5.49 | 78 | 5.51 | 47 | 2.44 |
| Շիրակ | 41 | 3.36 | 0 | 0.00 | 14 | 2.02 | 27 | 1.34 | 27 | 9.82 | 2 | 6.23 | 2 | 3.17 | 13 | 0.25 | 10 | 0.17 |
| Սյունիք | 18 | 0.09 | 1 | 0.03 | 15 | 0.03 | 2 | 0.03 | 53 | 36.91 | 28 | 35.33 | 2 | 0.32 | 14 | 0.71 | 9 | 0.55 |
| Վայոց ձոր | 5 | 0.12 | 0 | 0.00 | 1 | 0.03 | 4 | 0.09 | 35 | 25.39 | 23 | 25.11 | 0 | 0.00 | 6 | 0.13 | 6 | 0.15 |
| Տավուշ | 8 | 0.37 | 0 | 0.00 | 5 | 0.28 | 3 | 0.09 | 56 | 49.96 | 17 | 48.59 | 1 | 0.13 | 15 | 0.86 | 23 | 0.38 |
| Ընդամենը | 356 | 9.58 | 8 | 0.96 | 230 | 4.49 | 118 | 4.13 | 890 | 613.86 | 337 | 566.01 | 24 | 10.47 | 261 | 16.80 | 268 | 20.58 |

Հանրապետությունում 2016 թվականի առաջին կիսամյակում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 87 գործարք /40.09 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2016 թվականի առաջին կիսամյակում, 2015 թվականի առաջին կիսամյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 6.9 %-ով: Ընդ որում, Երևանում աճել է 1.8 %-ով, իսկ մարզերում նվազել է 7.5 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 5.6 %-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 25.9 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 3.1 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 41.5 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2016 թվականի առաջին կիսամյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների | | | | |
|---------------------------------------|--|----------------|--|--------------|--------|--|----------------|---|--------------|--------|
| | Միավորների քանակը | Մակերեսը /հա / | արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | | Միավորների քանակը | Մակերեսը /հա / | արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | |
| | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | 31 | 22.69 | 74.3 | 4498.3 | 577.8 | 183 | 122.49 | 365.0 | 12000.0 | 3513.0 |
| Ապարան | 2 | 0.51 | 140.4 | 3743.3 | 1941.8 | 17 | 9.58 | 86.5 | 2727.3 | 633.2 |
| Թալին | 11 | 17.63 | 37.9 | 244.9 | 136.7 | 85 | 51.73 | 93.6 | 5494.5 | 771.6 |
| Ծաղկահովիտ | 3 | 0.38 | 517.8 | 3410.5 | 1965.3 | 32 | 63.74 | 79.5 | 1000.0 | 381.3 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | 49 | 27.73 | 68.4 | 36316.8 | 2100.5 | 197 | 81.88 | 335.1 | 10833.3 | 2702.1 |
| Մասիս | 10 | 44.67 | 59.5 | 1866.4 | 608.8 | 72 | 54.04 | 200.0 | 11904.8 | 3216.8 |
| Վեդի | 19 | 80.95 | 45.0 | 499.4 | 239.6 | 142 | 209.86 | 207.0 | 10795.1 | 1967.1 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | 1 | 1.00 | 63.0 | 63.0 | 63.0 | 191 | 123.74 | 294.3 | 9090.0 | 1337.0 |
| Բաղրամյան | 1 | 0.41 | 76.5 | 76.5 | 76.5 | 72 | 220.29 | 90.6 | 2561.1 | 922.9 |
| Վաղարշապատ | 19 | 27.60 | 29.0 | 607.3 | 186.4 | 128 | 87.46 | 444.4 | 11764.7 | 1963.2 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | 8 | 18.79 | 163.5 | 663.8 | 495.4 | 49 | 21.14 | 199.8 | 1875.0 | 495.7 |
| Ճամբարակ | | | | | | 2 | 0.49 | 60.5 | 953.3 | 352.0 |
| Մարտունի | 4 | 4.35 | 64.6 | 381.1 | 144.0 | 12 | 4.56 | 51.1 | 2850.0 | 786.7 |
| Սևան | 5 | 6.19 | 180.0 | 1221.0 | 708.7 | 13 | 5.38 | 52.2 | 2134.8 | 354.5 |
| Վարդենիս | 11 | 42.10 | 115.4 | 885.6 | 372.5 | 36 | 84.77 | 41.2 | 2575.1 | 406.5 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | 2 | 0.71 | 2442.0 | 2561.8 | 2501.9 | 39 | 21.27 | 170.4 | 6424.2 | 576.5 |
| Գուգարք | 4 | 1.82 | 199.0 | 1456.2 | 788.2 | 20 | 10.74 | 234.6 | 6065.9 | 815.6 |
| Սպիտակ | | | | | | 12 | 3.37 | 250.0 | 5555.5 | 675.0 |
| Ստեփանավան | 1 | 1.02 | 123.9 | 123.9 | 123.9 | 34 | 26.77 | 90.6 | 1686.6 | 418.7 |
| Տաշիր | 1 | 1.18 | 168.1 | 168.1 | 168.1 | 812 | 381.88 | 45.3 | 1384.4 | 185.0 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 44 | 85.71 | 69.5 | 2760.3 | 496.9 | 119 | 114.25 | 279.3 | 11942.7 | 3923.7 |
| Եղվարդ | 28 | 54.91 | 44.6 | 5712.6 | 506.0 | 272 | 256.38 | 174.4 | 11971.8 | 2511.0 |
| Հրազդան | 13 | 10.45 | 85.4 | 897.3 | 305.1 | 47 | 26.33 | 130.5 | 10256.4 | 1009.4 |

| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
|-----------------|----|-------|--------|--------|--------|-----|-------|-------|---------|--------|
| Ախուրյան | 1 | 5.08 | 103.5 | 103.5 | 103.5 | 84 | 69.71 | 252.0 | 1693.1 | 646.8 |
| Ամասիա | | | | | | 4 | 5.81 | 40.9 | 261.0 | 136.5 |
| Անի | 1 | 1.15 | 93.0 | 93.0 | 93.0 | 86 | 60.96 | 110.6 | 546.9 | 454.2 |
| Աշոցք | | | | | | 5 | 2.14 | 58.5 | 215.8 | 138.5 |
| Արթիկ | | | | | | 70 | 48.97 | 79.4 | 1428.6 | 516.3 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | | | | | | 12 | 15.17 | 92.6 | 1023.2 | 787.5 |
| Կապան | 8 | 4.41 | 143.8 | 931.9 | 375.2 | 116 | 62.83 | 120.0 | 841.6 | 432.5 |
| Մեղրի | 19 | 30.70 | 77.0 | 1246.3 | 292.1 | 71 | 24.96 | 193.0 | 3000.0 | 795.6 |
| Սիսիան | 1 | 0.22 | 133.9 | 133.9 | 133.9 | 68 | 59.31 | 46.3 | 1977.4 | 594.9 |
| Վայոց ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | 23 | 25.11 | 21.7 | 1156.4 | 124.8 | 62 | 31.59 | 125.0 | 10000.0 | 1748.7 |
| Վայք | | | | | | 52 | 43.89 | 58.8 | 1430.7 | 588.3 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | 28 | 10.15 | 213.3 | 3783.8 | 685.8 |
| Իջևան | 14 | 48.14 | 1039.5 | 3240.0 | 1944.9 | 21 | 20.94 | 267.5 | 9454.5 | 1504.0 |
| Նոյեմբերյան | 3 | 0.45 | 726.1 | 5806.9 | 3266.6 | 10 | 6.76 | 46.7 | 7368.4 | 985.0 |

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2016 թվականի առաջին կիսամյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների | | | | |
|---------------------------------------|--|---------------|---|--------------|--------|--|---------------|--|--------------|--------|
| | Միավորների քանակը | Մակերեսը /քմ/ | արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | | Միավորների քանակը | Մակերեսը /քմ/ | արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | |
| | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | 8 | 1294.5 | 2274.5 | 4571.4 | 3132.5 | 74 | 63683.0 | 130.7 | 22200.0 | 2591.6 |
| Ապարան | 3 | 735.2 | 271.5 | 553.0 | 475.9 | 12 | 11291.0 | 124.1 | 609.6 | 390.0 |
| Թալին | | | | | | 13 | 11446.3 | 63.2 | 1454.8 | 152.5 |
| Ծաղկահովիտ | | | | | | 3 | 6420.0 | 60.0 | 214.3 | 93.5 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | 17 | 14782.7 | 538.0 | 3561.6 | 856.9 | 54 | 55387.4 | 173.9 | 7140.3 | 906.0 |
| Մասիս | 26 | 16396.7 | 535.3 | 3705.3 | 2303.8 | 102 | 71099.7 | 187.5 | 25000.0 | 1208.2 |
| Վեդի | 31 | 16048.3 | 667.2 | 3000.0 | 899.5 | 39 | 41922.5 | 126.1 | 5000.0 | 664.4 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | 3 | 840.4 | 555.0 | 3528.0 | 2784.7 | 85 | 84367.0 | 131.6 | 9090.9 | 1215.5 |
| Բաղրամյան | | | | | | 7 | 8771.0 | 100.0 | 833.3 | 240.0 |
| Վաղարշապատ | | | | | | 131 | 116910.6 | 197.4 | 26528.4 | 1530.3 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | 2 | 4636.0 | 850.5 | 850.5 | 850.5 | 19 | 19512.6 | 186.6 | 1084.3 | 683.7 |
| Ճամբարակ | | | | | | 3 | 2531.0 | 71.3 | 2286.2 | 146.8 |
| Մարտունի | 5 | 4990.0 | 112.6 | 404.9 | 248.4 | 51 | 60371.8 | 119.3 | 5000.0 | 280.5 |
| Սևան | 2 | 2270.1 | 410.5 | 413.0 | 411.8 | 7 | 6005.3 | 240.0 | 3110.4 | 337.5 |
| Վարդենիս | 3 | 6123.3 | 38.5 | 1200.0 | 612.8 | 12 | 19661.0 | 72.5 | 987.2 | 150.8 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | 8 | 2503.3 | 225.0 | 2750.1 | 1321.6 | 20 | 20016.5 | 114.3 | 1388.9 | 216.9 |
| Գուգարք | 9 | 1851.0 | 197.5 | 5843.3 | 1883.1 | 7 | 5484.0 | 77.9 | 14083.3 | 1260.2 |

| | | | | | | | | | | |
|-----------------|----|---------|--------|---------|--------|-----|----------|-------|---------|--------|
| Սպիտակ | 1 | 605.1 | 736.2 | 736.2 | 736.2 | 7 | 7040.0 | 104.9 | 1348.3 | 201.1 |
| Ստեփանավան | 1 | 1177.6 | 173.2 | 173.2 | 173.2 | 5 | 2875.0 | 88.2 | 1666.7 | 175.5 |
| Տաշիր | 2 | 942.7 | 316.5 | 400.0 | 358.3 | 1 | 600.0 | 45.3 | 400.0 | 90.0 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 50 | 31167.8 | 352.9 | 5434.3 | 3204.5 | 121 | 97361.5 | 264.5 | 35353.5 | 1955.1 |
| Եղվարդ | 27 | 23480.5 | 204.2 | 4425.0 | 1677.4 | 130 | 108145.6 | 173.6 | 27000.0 | 2858.2 |
| Հրազդան | 1 | 422.0 | 3234.8 | 3234.8 | 3234.8 | 19 | 23481.0 | 117.7 | 34848.5 | 1318.0 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | 6 | 1026.5 | 2100.0 | 10500.0 | 6243.6 | 16 | 15022.6 | 113.6 | 18750.0 | 334.8 |
| Ամասիա | | | | | | | | 45.3 | 274.7 | 72.0 |
| Անի | 2 | 431.5 | 464.9 | 1797.8 | 1131.4 | 18 | 23588.0 | 67.9 | 180.6 | 206.5 |
| Աշոցք | | | | | | | | 40.8 | 144.0 | 65.0 |
| Արթիկ | 5 | 1092.0 | 891.0 | 2875.2 | 2438.8 | 17 | 13299.0 | 111.8 | 5000.0 | 218.2 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | 4 | 1939.0 | 230.0 | 230.0 | 230.0 | 7 | 7479.0 | 112.2 | 1700.0 | 366.6 |
| Կապան | 5 | 2126.7 | 266.4 | 2500.0 | 1261.2 | 3 | 5943.0 | 67.9 | 2638.9 | 354.6 |
| Մեղրի | 2 | 1019.8 | 290.5 | 303.8 | 297.2 | 19 | 16570.4 | 68.5 | 632.9 | 269.7 |
| Սիսիան | 3 | 2000.0 | 554.4 | 580.8 | 572.0 | 3 | 6730.0 | 123.5 | 875.0 | 250.0 |
| Վայոց ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | 2 | 1140.0 | 354.5 | 1655.9 | 1005.2 | 13 | 15410.0 | 96.7 | 7659.6 | 507.1 |
| Վայք | 4 | 174.3 | 1050.0 | 1068.7 | 1054.7 | 1 | 770.0 | 120.7 | 1448.3 | 250.0 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | 2 | 1165.0 | 75.8 | 810.0 | 125.3 |
| Իջևան | 12 | 6393.7 | 165.8 | 3000.0 | 1576.6 | 27 | 21371.3 | 74.1 | 14423.1 | 513.1 |
| Նոյեմբերյան | 3 | 2245.9 | 891.0 | 891.0 | 891.0 | | | 125.0 | 1948.1 | 252.0 |

2016 թվականի առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3787 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.6 %-ը:

2016 թվականի առաջին կիսամյակում անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը, 2015 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, աճել է 3.3 %-ով, իսկ 2015 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ 9.0 %-ով :

2016 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 235 բնակարանի, 300 անհատական բնակելի տան, 1842 հասարակական և 391 արտադրական նշանակության օբյեկտի, 944 միավոր հողի, 1 այգետնակի և 74 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2016 թվականի առաջին կիսամյակում Երևան քաղաքում հողերի նկատմամբ գրանցված 35 վարձակալության գործարքի քանակը, 2015 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել է 28.6 %-ով, իսկ 2015 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 2.9 %-ով:

2016 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում վարձակալված 3115.33 հա հողից 5.74 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 3109.60 հա հողի 2962.24 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 57.62 հա՝ արդյունաբերական օբյեկտի, 3.00 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտի հողերը: Առավել մեծ մակերեսով հող վարձակալվել է Վայոց ձորի մարզում՝ 1056.43 հա, որից 1054.46 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2016 թվականի առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 9289 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 11.2 %: 2016 թվականի առաջին կիսամյակում

գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2015 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 10.6 %-ով , իսկ 2015 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 25.3 %-ով:

Գրավադրման գործարքն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանի /51.0 %/, անհատական բնակելի տան /22.7 %/, հասարակական նշանակության օբյեկտի /11.1 %/ և հողի /9.7 %/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5034 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2015 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել է 10.2 %-ով, իսկ 2015 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 20.3 %-ով:

2016 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 759 գործարք, որից 503 Երևանում: Հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2015 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել է 10.9 %-ով, ընդ որում Երևանում՝ 12.8 %-ով, իսկ մարզերում՝ 6.9 %-ով: Հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2015 թվականի առաջին կիսամյակի համեմատ, աճել է 24.6 %-ով, ընդ որում Երևանում՝ 12.5 %-ով, իսկ մարզերում՝ 58.0 %-ով:

2016 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում գրավադրվել է 6118.18 հա մակերեսով հող, որից 23.73 հա Երևանում: Ընդ որում գրավադրված հողի 28.9 % կամ 1768.06 հա գյուղատնտեսական նշանակության է, որից Երևանում՝ 2.04 հա: Առավել մեծ մակերեսով հող գրավադրվել է Սյունիքի մարզում՝ 2876.47 հա, որից 16.61 հա գյուղատնտեսական նշանակության:

2016 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 9799 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2015 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 11.9 %-ով, իսկ 2015 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 5.5 %-ով: Առաջնային գրանցումների ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 11.8 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /23.0 %/:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե